ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կ.Դրամբյանի (լիազորագիր՝ տրված 07.01.2022թ.),

քննելով «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված (03.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.12.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

2. Հայտերի բացման ժամկետ է սահմանվել՝ 08.12.2021թ. ժամը 12:00-ն:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն:

4.«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի 21.12.2021 թվականի նիստի N6 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Հիմք ընդունելով գնային առաջարկները, հանձնաժողովը որոշեց. Նախահաշվային գները գերազանցելու հիմքով մերժել 1, 2 և 3-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ հայտը: Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

5.«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի 21.12.2021 թվականի նիստի N6 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշեց. Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկի համար կիրառել ՀՀ Կառավարության 04.05.2017թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմանները:

6.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.12.2021 թվականին հրապարակվել է հայտարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, որով Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընդունվել է որոշում պայմանագիր կնքելու մասին, իսկ 1-ին չափաբաժնի մասով՝ ընտրված մասնակից չի արձանագրվել:

7.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.12.2021 թվականին հրապարակվել է հայտարություն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, որով հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցին, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն Ընթացակարգի ոչ համաչափ, ոչ մրցակցային, մասնակցիների՝ ոչ հավասար պայմաններում մասնակցության և Ընթացակարգի խտրական լինելու արդյունքում զրկվել է պետական գնմանը մասնակցնելու հնարավորությունից:

Այսպես, ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բողոքարկվող որոշման՝ առկա է որոշակի նախահաշվային գին, որը գնային առաջարկով գերազանցվել է: Մինչդեռ, որևէ իրավական ակտով նման նախահաշվային գին սահմանված չէ, իսկ հանձնաժողովի հիշյալ արձանագրության մեջ բացակայում է նման որևէ իրավական ակտին հղում:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովի՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ հայտը նախահաշվային գները գերազանցելու հիմքով 1, 2 և 3-րդ չափաբաժիններով մերժելու որոշումն իրավաչափ չէ:

Տվյալ դեպքում, գնահատող հանձնաժողովի վերոգրյալ որոշմամբ խախտվել է բողոք ներկայացրած անձի՝ Ընթացակարգի այլ մասնակիցների հետ հավասարության պայմաններում Ընթացակարգին մասնակցնելու և իր ապրանքը այլ մասնակիցների հետ հավասար պայմաններում վաճառելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021 թվականին կայացած N6 նիստի արձանագրության թիվ 3 կետի՝

Ա. Նախահաշվային գները գերազանցելու հիմքով 1, 2 և 3-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ հայտը մերժելու որոշումը:

Բ. Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:

Գ. Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:

2. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021 թվականին կայացած N6 նիստի արձանագրության թիվ 2 կետի՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկի համար ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմանները կիրառելու որոշումը:

3. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021 թվականին կայացած N6 նիստի արձանագրության թիվ 4 կետի՝ ընթացակարգի 1-ին չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն չկայացած հայտարարելու որոշումը:

4. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց միցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021 թվականին կայացած N6 նիստի արձանագրության թիվ 4 կետի՝ ընթացակարգի 1-ին չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն չկայացած հայտարարելու որոշումը:

5. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 22.12.2021 թվականին հրապարակված՝ Պայմանագրեր կնքելու մասին որոշումը Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

6. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 22.12.2021 թվականին հրապարակված՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Այնուհետև՝ Պատվիրատուի դիրքորոշման վերաբերյալ 12.01.2022թ. Ընկերության կողմից ներկայացվել է առարկություն հետևյալ բովանդակությամբ.

«Ստորև ներկայացվում է «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի առարկությունները թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 ծածկագրով բողոքի շրջանակներում Պատվիրատուի կողմից 05.01.2022թ. ներկայացված դիրքորոշման վերաբերյալ:

Այսպես, ներկայացված բողոքի հիմնական էությունը հանգում էր նրան, որ ըստ բողոքաբերի, Պատվիրատուն որոշ չափաբաժինների մասով մրցույթը հայտարարել է չկայացած՝ վկայակոչելով ինչ որ «նախահաշվային» գնի գերազանցում և բողոքաբեր ընկերության համար հասկանալի չէր, թե դա ինչ «նախահաշվային գին» է, ում կողմից է որոշվում, ինչ փաստաթղթով է հաստատվում և այլն, ինչը Պատվիրատուին հնարավորություն է տալիս հղում կատարել «նախահաշվային գնին» և դրա գերազանցման փաստով մրցույթը հայտարարում չկայացած:

Բերված բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքրոշմամբ, Պատվիրատուն նախ վկայակոչել է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի Գնումների գործընթացի կարգը հաստատելու մասին որոշման (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի առաջին ենթակետի «ե» պարբերությունը (համաձայն որի՝ Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է նման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Ըստ էության, վկայակոչված նորմը հիմք ընդունելով Պատվիրատուն ներկայացրել է «Գնման հայտ» վերնագրված մի փաստաթուղթ, որն, ըստ էության, ներքին շրջանառության փաստաթուղթ է, ստորագրված գնումների բաժնի պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Տաթևիկ Ջիլավյանի կողմից և ուղղված «Նորք-Մարաշ» ՓԲԸ գնումները համակարգող Կ. Դրամբյանին, որով, ի թիվս այլ տվյալների, առկա է «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերնագրված

փաստաթուղթ, որում առկա է առանձին սյունակ՝ «միավորի գինը՝ ՀՀ դրամով», որում նշված են տարբեր միավորներ, կոնկրետ, օրինակ՝ «մարդու ալբումին» ապրանքի համար նշված է «10.544»:

Տվյալ դեպքում, բողոքի ողջ էությունը հանգում է նրան, որ անհասկանալի է տվյալ գնի ձևավորման տրամաբանությունը. Մասնավորապես՝ ինչպես է որոշվել տվյալ գինը, ով է որշել, ինչ չափանիշների հիման վրա, կա արդյոք նման գնի հաստատման կամ վերահսկողության որևէ մեխանիզմ, թե՝ ոչ, արդյոք տվյալ գինը ենթակա է հրապարակման մինչև մրցույթի անցկացնելը, թե՝ ոչ:

Իրականում, Պատվիրատուի ներկայացուցչի դիրքորոշման էությունը հանգում է հետևյալին. Պատվիրատուի ինչ-որ աշխատակիցներ (տվյալ դեպքում՝ պահեստապետի ժ/պ-ն, գլխավոր հաշվապահը և մատակարար դեղագետը) «որոշում են» միավորի առավելագույն գին, այդ որոշված գինը տրամադրում մեկ այլ աշխատանցի, ով էլ մեկնարկում է համապատասխան գնման գործընթացը:

Բնականաբար, տվյալ գործընթացը չի կարող նման տրամաբանությամբ կանոնակարգված լինել, քանի որ ցանկացած դեպքում, մրցութային փաթեթները բացելուց և դրանցով նախատեսված գնային առաջարկները տեսնելուց հետո առանց որևէ խոչընդոտի կարելի է կազմել նմանաբնույթ մի փաստաթուղթ՝ նույն հաջողությամբ տալ ստորագրել նույն կամ որևէ այլ աշխատակցի, օր՝ պահակին և հայտարարել, որ սահմանված առավելագույն գինը գերազանցվել է և նման եղանակով ցանկացած մրցույթ հայտարարել չկայացած՝ ստեղծելով պայմաններ անցանկալի մասնակցին մրցույթից հեռացնելու և(կամ) ցանկալի մասնակցի հետագա հաղթանակի հնարավորության համար:

Հետաքրքրական է, որ արձանագրությունում օգտագործվում է «նախահաշվային գին» հասկացությունը՝ որպես առավելագույն գին, իսկ արդեն ներկայացված առարկություններում օգտագործվում է առավելագույն գին հասկացությունը (ըստ էության՝ գնման հայտում ևս չի օգտագործվում «նախահաշվային գին» հասկացությունը, ինչը անհասկանալի է, քանի որ դրան հաջորդած արձանագրությունում նույն երևույթը հենց «նախահաշվային գին» է անվանվել:

Իրականում, տվյալ հասկացությունների բովանդակությունը տարբեր են, և խոսքը բացաձակ տարբեր երևույթների մասին է, սակայն տվյալ դեպքում, իմաստային նման շփոթը, բնավ, պատահականության արդյունք չէ: Բանն այն է, որ մեծ հավանականությամբ «գնման հայտ» կոչվող փաստաթուղթը կազմվել է արձանագրությունից հետո՝ հավանաբար քննվող բողոքին առարկություն պատրաստելիս, ինչի ժամանակ օրենսդրության

ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ճիշտ է օգտագործել «առավելագույն գին» հասկացությունն այլ ոչ թե՝ «նախահաշվային գին» հասկացությունը: Հակառակ պարագայում՝ արձանագրության տեքստը կկազմվեր հայտում օգտագործված հասկացությունների հիման վրա և դրանց տրամաբանական կապը պահելով, հետևաբար և՝ նման իմաստային շփոթ չէր առաջանա:

Իրականում, գոյություն ունի փաստաթուղթ, որով նախատեսվում է գնման առարկայի առավելագույն գինը, այդ փաստաթուղթը գնման տարեկան պլանն է, որը հաստատել և հրապարակել է նաև Պատվիրատուն: Մինչդեռ, տվյալ պլանով որևէ ապրանք, այդ թվում հայտարարված մրցույթով ձեռք բերվելիքը, չունի սահմանված առավելագույն գին: Ըստ էության, գնման պլանի նման կերպ կազմելն էլ հնարավորություն է տալիս Պատվիրատուին նման կերպ հեշտությամբ մանևրել «առավելագույն գնի» դաշտում և ցանկացած մասնակցի հեռացնել մրցույթից՝ կամայական «առավելագույն գին» հայտարարելով:

Թերևս այս ողջ «պատմության» միակ ողջամիտ բացատրությունն այն, է, որ Պատվիրատուն իր գնման հրավերի տեխ. բնութագրով ներկայացրել է «Մարդու ալբումին» ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Ծագման երկիրը) Ավստրիա, կամ համարժեք», իսկ Բողոքաբերի կողմից ներկայացված «մարդու ալբումին» ապրանքի ծագման երկիրը Ուկրաինան է: Հավաբար, հասկանալով, որ որևէ իրավական հեռանկար չի կարող ունենալ այն պատճառաբանությունը, որ Ուկրաինան Ավստրիային «համարժեք» երկիր չէ (իսկ գնման հրավերի տեխ. բնութագիրը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կարգի պահանջների խախտումով), Պատվիրատուն պարզապես «որոշել» է ներկայացված ապրանքը չգնել «առավելագույն գնի» «հիմնավորումը» ստեղծելու:

Բնականաբար, նման երևույթը որևէ կապ չի կարող ունենալ պաշտոնասար անձի՝ իր պարտականությունները ծառայության շահերին հակաուակ չօգտագործելու օրենսդրական պահանջի հետ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանցագործություն է պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական

շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը:

Հարգելի պարոն Ներսիսյան, 11.01.2022 թվականին Ձեզ է ներկայացվել միջնորդություն ԳԲՔԱ-2022/01 ծածկագրով բողոքի քննության արդյունքում որոշման հրապարակումը հետանգել և որոշման հրապարակման նիստի փոխարեն իրականացնել ներկայացված բողոքի ըստ էության քննություն՝ հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից Ձեզ էին ներկայացվել փաստաթղթեր, որոնք բողոքաբերին չէին տրամադրվել, իսկ դրանց և սույն առարկությունների հաշվառմամբ, կարծում, եմ, բողոքի լրիվ և օբյեկտիվ քննության համար անհրաժեշտ է Պատվիրատուի ներկայացուցչին ուղղել որոշ հարցեր, օր՝ Պատվիրատուի ներքին փաստաթղթերով ով, երբ և ինչպես է որոշում ապրանքի առավելագույն գինը, ինչ հիմնավորմամբ, որ ամսաթվին է կազմվել Ձեզ ներկայացված «գնման հայտ»-ը, արդյոք դրա վրա առկա ամսաթվին, թե՝ ավելի ուշ, ինչ փաստաթղթում է ամրագրվում ապրանքի առավելագույն գինը, ինչ կարգով և այլն:

Հաշվի առնելով իրավիճակի եզակի լինելը (բողոքաբերը գնումների գործընթացին պարբերաբար մասնակցելու երկարամյա փորձի ընթացքում առաջին անգամ է հանդիպել մրցույթը նման հիմքով չկայացած հայտարարելու դեպքի), ինչպես նաև այլ, որ բողոքաբերի կարծիքով, «մարդու ալբումին» ապրանքատեսակի մասով Պատվիրատուի կողմից հայտարարված առավելագույն գինը էական (գրեթե՝ կրկնակի) ցածր է դրա հնարավոր ամենացածր շուկայական գնից (Օրինակ՝ հենց նույն «մարդու այլբումին» ապրանքը 2021 թվականի հունվար ամսին հենց նույն Պատվիրատուն գնել է Բողոքաբերից 20.000 ՀՀ դրամ գնով), առաջացել են բազմաթիվ հարցեր որոնց օբյեկիվորեն հնարավոր է պատասխան ստանալ այս բողոքարկման գործընթացքում: Հակառակ դեպքում, բողոքաբերը ստիպված է լինելու իր բարձրացրած հարցերի պատասխանները ստանալ այլ իրավական գործընթացների միջոցով:

Ելնելով վերոգրյալից, մեկ անգամ ևս պնդում եմ 11.01.2022 թվականին ներկայացրած միջնորդությունս, այն է՝

Հետաձգել ԳԲՔԱ-2022/01 ծածկագրով բողոքի քննության արդյունքներով որոշման հրապարակումը, ԳԲՔԱ-2022/01 ծածկագրով բողոքի քննության արդյունքներով 14.01.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված որոշման հրապարակման նիստի փոխարեն անցնակցել բողոքի ըստ էության քննության նիստ՝ հնարավորություն ստեղծելով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ներկայացուցչին ուղղել վերջինիս կողմից ներկայացված առարկությունների հիմքով առաջացած որոշ հարցեր:

Կից ներկայացվում է՝

1. Պատվիրատուի 2022 թվականի գնման տարեկան պլանը:

2. «Մարդու ալբումին» ապրանքի գնման պայմանագրի և համապատասխան հարկային հաշվի պատճենները: 12.01.2021թ.»

2. <u>«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված և 05.01.2021թ. թիվ 08-003 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 30.12.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն համաձայն

«21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ե. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,»

Կարգի 24-րդ կետի համաձայն.

«24. Պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին»

Կարգի 40-րդ կետի

-1-ին ենթակետի համաձայն

«Հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.»

-5-րդ ենթակետի համաձայն

«հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները»:

Իրավական ակտերի վերոնշյալ դրույթները մեկնաբանելուց կարելի է հստակ առանձնացնել հետևյալ քայլերի հերթականությունը.

-Գնման առարկայի նախահաշվային գինը նախատեսվում է Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված գնման հայտով, որը փոխանցվում է գնումները համակարգողին,

-Հայտերի բացման նիստին հրապարակվում են գնման առարկայի նախահաշվային գները,

-Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հրապարակված ընթացակարգերի դեպքում կազմակերպվում է գնային առաջարկների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ՝ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված մասնակիցների հետ,

-Բանակցությունների ավարտին գնահատող հանձնաժողովը նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին ճանաչում է ընտրված, իսկ եթե նվազագույն առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը, ապա կարող է ըստ առանձին չափաբաժինների, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերության կիրառմամբ նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին ճանաչել որպես ընտրված մասնակից իսկ մնացած դեպքերում նախահաշվային գները գերազանցող բոլոր առաջարկները ենթակա են մերժման,

-ընտրված մասնակից չունենալու դեպքում ընթացակարգը ըստ չափաբաժինների ենթակա է հայտարարման չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է լիովին իրավաչափ, բոլոր մասնակիցների համար միասնական կանոններով և չի սահմանափակել որևէ մասնակցի իրավունք, ուստի Մասնակցի պնդումը իրավաչափ չէ:

Կից ներկայացնում ենք գնման հայտի և գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Դեղորայքի ձեռքբերման նպատակով «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել է գնման հայտ:
2. «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանքների քանակները, նախահաշվային և մասնակիցների կողմից առաջարկվող գները:
4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել օրենքով սահմանված կարգով մասնակիցներին 21.12.2021թ. ժամը 12:00-ին գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:
5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցությունների արդյունքում բոլոր գնային առաջարկները թողնվել են անփոփոխ:

6. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշում է կայացրել ընթացակարգի 2-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկի համար ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմանները կիրառելու վերաբերյալ:

7. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով գնային առաջարկները, նախահաշվային գները գերազանցելու հիմքով որոշում է կայացրել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, մերժելու և «Լեյկո» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով, իսկ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով, հաղթող մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

8. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի 30.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 05.01.2022թ. թիվ 08-003 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում.

դ. մեկ անձից գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը՝ բացառությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով մեկ անձից գնումների կատարման դեպքերի: Ընդ որում, գնումները սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված հիմքերով, էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով չիրականացնելու դեպքում, ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թիվը չի կարող պակաս լինել երեքից,

ե. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,

զ. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը,

է. կանխավճարի հատկացման հնարավորությունը և առավելագույն չափը,

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում:

(…)

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

(…)

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի

իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի. (...):

Այսպես՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հաստատվել է հետևյալ գնման հայտը՝

<Նորք-Մարաշ> ԲԿ> ՓԲԸ-ի

գնումները համակարգող՝

պարոն Կ. Դրամբյանին

ԳՆՄԱՆ ՀԱՅՏ N 14

<<Նորք-Մարաշ>> բ.կ.>> ՓԲԸ-ի 2022թ. կարիքների համար, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն բաց մրցույթով դեղորայքի գնում կատարելու նպատակով կից Ձեզ ենք ներկայացնում համապատասխան գնման հայտը: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու նպատակով առաջարկվում են ներքոհիշյալ անդամների թեկնածությունները:

Գնումը անհրաժեշտ է կազմակերպել հաշվի առնելով <<Գնումներ մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանները:

Աննա Մեսրոպյան	Մատակարար-դեղագետ /հանձնաժողովի նախագահ/
Տաթևիկ Ձիլավյան	Գնումների բաժնի ղեկավար
Վաղարշակ Չիլինգարյան	Պահեստապետի ժամանակավոր պաշտոնակատար

Գնումների բաժնի պետ՝
պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Տաթևիկ Ձիլավյան

19.11.2021թ.

Հաստատում եմ.
կենտրոնի գնումների
պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

---------- Տ. Ջիլավյան

19.11. 2021թ.

1. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

1.1 Մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշները սահմանվում և գնահատվում է ՀՀ գնումների մասին օրենսդրության շրջանակներում հաստատված հրավերների օրինակելի ձևերին համապատասխան:

1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկված ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը:

1.3 Սույն ընթացակարգի շրջանակներում գնման երնթակա ապրանքների մատակարարման համար լիցենզիա չի պահանջվում:

1.4 Սույն ընթացակարգի շրջանակներում կանխավճար չի տրամադրվում:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ընդ որում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
բոլորը	բոլորը	*Դեղորայք*	**Ֆինանսական միջոցները նախատեսված չեն:** Վճարումը իրականացվելու է սահմանված կարգով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, Ապրանքները կամ դրա մի մասը ընդունելու օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:											

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համարը	Միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման	Գնման առարկայի անվանումը	Ապրանքային նշանը, Արտադրողը	Ծագման երկիրը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը	Չափման միավորը	Միավորի գինը << դրամով	2022թ. Գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը	Ընդամենը գումարը << դրամով
1	33141165	Ալբումին մարդու		Ավստրիա	Ալբումին մարդու, լուծույթ կաթիլաներարկման, 200մգ/մլ, 50մլ սրվակ: Ավստրիական կամ համարժեքը	սրվակ	10 544	900	9 490 000,0
2	33621450	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)		Գերմանիա, Հունգարիա, Սլովենիա, Շվեյցարիա, Հյուսիսային Մակեդոնիա,	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր 10մգ	դեղահատ	27,50	3 900	107 250,0
3	33621140	Կլոպիդոգրել (կլոպիդոգրելի հիդրոսուլֆատ)		Գերմանիա,Հունգարիա,Սլովենիա, Շվեյցարիա, Ֆրանսիա,	Կլոպիդոգրել (կլոպիդոգրելի հիդրոսուլֆատ) դեղահատեր թաղանթապատ 75մգ;	դեղահատ	98,00	25000	2 450 000,0
4	33651118	Ցեֆտրիաքսոն		Շվեյցարիա, Միացյալ Թագավորություն, Ավստրիա, Հարավային Կորեա, Ֆրանսիա, Իսպանիա	Ցեֆտրիաքսոն դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ ապակե սրվակներ,	սրվակ	1 800,00	1200	2 160 000,0
5	33651140	Ցեֆեպիմ (ցեֆեպիմի հիդրոքլորիդ)		Հարավային Կորեա,	Ցեֆեպիմ (ցեֆեպիմի հիդրոքլորիդ) դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ, ապակե սրվակ	սրվակ	3 900	100	390 000,0
		ԸՆԴԱՄԵՆԸ							14 597 250

Ընդհանուր պայմաններ՝

Բնութագրերում գնման առարկայի ծագման երկրին կատարված հղումների հետ միասին հասկանալ <<կամ համարժեքը>> բառերը:
Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2022թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:
Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով:
Վաճառողը ապրանքի հետ միասին պետք է ներկայացնի << Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը: Ապրանքները պետք է համապատասխանեն << Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին:
Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

Մատակարար դեղագետ՝ Ա. Մեսրոպյան

Պահեստապետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Վ.Չիլինգարյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս Շախբաթյան

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանքների քանակները, նախահաշվային և մասնակիցների կողմից առաջարկվող գները, համաձայն հետևյալ հավելվածի՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակ	Նախա-հաշվային գումարը	«ֆարմա-սերվիս» ՍՊԸ	«Վագա-Ֆարմ» ՍՊԸ	«Արֆար-մացիա» ՓԲԸ	«Եվրոֆարմ» ՍՊԸ	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	«Լեյկո» ՍՊԸ	«Ջիարջի» ՍՊԸ
	Բոլորը ԱԱՀ-ով										
1	Ալբումին մարդու	Սրվակ	900	9490000		16200000		17910000			26100000
2	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	Դեղահատ	3900	107250		111150			355212	107640	152100
3	Կլոպիդոգրել (կլոպիդոգրելի հիդրոսուլֆատ)	Դեղահատ	25000	2450000		2850000			2250000		12475000
4	Յեֆտրիաքսոն	Սրվակ	1200	2160000	2160000	204000	2880000				5998800
5	Յեֆեպիմ (ցեֆեպիմի հիդրոքլորիդ)	Սրվակ	100	390000	350000						

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել օրենքով սահմանված կարգով մասնակիցներին 21.12.2021թ. ժամը 12:00-ին գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցությունների արդյունքում բոլոր գնային առաջարկները թողնվել են անփոփոխ:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշում է կայացրել ընթացակարգի 2-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկի համար ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմանները կիրառելու վերաբերյալ:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով գնային առաջարկները, նախահաշվային գները գերազանցելու հիմքով որոշում է կայացրել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, մերժելու և «Լեյկո» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով, իսկ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով, հաղթող մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Հարկ եմ համարում ընդգծել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն բանակցությունների արդյունքում արձանագրվել է, որ բոլոր գնային առաջարկները թողնվել են անփոփոխ:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

Այսինքն՝ վերոգրյալ իրավական նորմով նախատեսվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշակի գործողություններ կատարելու իրավունքը, ոչ թե պարտականությունը, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկի համար կայացված որոշումն իրավաչափ է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «է» պարբերությամբ հստակ սահմանվել է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի

37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա չկայացած հայտարարելու պահանջ, տվյալ դեպքում՝ 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գները գերազանցել են գնման հայտով սահմանված գինը, հետևաբար՝ այս մասով ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն, այն է՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելը, իրավաչափ են և բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանվել է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները, ուստի շարադրված իրավական նորմի և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով, հաղթող մասնակից ճանաչելով գործել է իրավաչափ:

Անդրադառնալով «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12.01.2022թ. ներկայացված առարկությանը՝ հարկ եմ համարում հայտնել, որ առարկությամբ բարձրացված հարցերի քննությունը դուրս է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունների շրջանակներից:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.01.2022թ. ներկայացվել է միջնորդություն, հետևյալ բովանդակությամբ.

«Ձեր նախագահությամբ 07.01.2022 թվականին կայացած նիստում քննվել է «Վագա-Ֆարմ» ՍՊԸ կողմից (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.12.2021 թվականին ներկայացված բողոքը (բողոքի ծածկագիր՝ ԳԲՔԱ-2022/01):

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն որևէ կերպ չի ծանուցվել տվյալ նիստի մասին: Ավելին, գնումների պատվիրատու «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել առարկությունների տեքստ՝ կից որոշ փաստաթղթերով, որոնք «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին չեն ներկայացվել և բողոքաբեր Ընկերությունը հնարավորություն չի ունեցել ծանոթանալ դրանց և դրանց վերաբերյալ ներկայացնել ընկերության դիրքորոշումը:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018 թվականի N 600-Ն հրամանի 15-րդ կետի համաձայն՝ Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը:

Այսպիսով, «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին բողոքի քննության նիստի վայրի և ժամի մասին չծանուցելու, ինչպես նաև բողոքի քննության ընթացքում պատվիրատուի առարկությունները և կից փաստաթղթերի պատճենները չտրամադրելու արդյունքում խախտվել է Ընկերության լսված լինելու իրավունքը՝ ինչով էլ խախտվել է Ընկերության՝ իր կողմից ներկայացված բողոքի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հետաձգել ԳԲՔԱ-2022/01 ծածկագրով բողոքի քննության արդյունքներով որոշման հրապարակումը, ԳԲՔԱ-2022/01 ծածկագրով բողոքի քննության արդյունքներով 14.01.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված որոշման հրապարակման նիստի փոխարեն անցնակցել բողոքի ըստ էության քննության նիստ՝ հնարավորություն տալով «Վագա- Ֆարմ» ՍՊԸ-ին «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքներ քննող անձին ներկայացված առարկությունների և կից փաստաթղթերի վերաբերյալ ներկայացնել իր դիրքորոշումը:

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին տրամադրել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքներ քննող անձին ներկայացված առարկությունների և դրան կից փաստաթղթերի պատճենները (սկանները)»:

Վերը շարադրված միջնորդությունը «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքի քննության արդյունքներով 14.01.2022թ. հրավիրված որոշման հրապարակման նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մերժվել է, հետևյալ պատճառաբանությամբ.

«Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը՝ հայտնում եմ հետևյալը.

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի գործողությունների դեմ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացվել է բողոք, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունվել է վարույթ՝ ստանալով ԳԲՔԱ-ՆԳ-2022/01 ծածկագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 03.01.2022թ., այդ մասին տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, հրապարակվել է հայտարարություն՝ նշվելով հրապարակման ամսաթիվը, որից հետո տեղեկագրում 03.01.2022թ. հրապարակվել է բողոքի քննության շրջանակում հրավիրված նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվություն պարունակող հայտարարություն հետևյալ բովանդակությամբ.

««Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված բողոքի (պատվիրատու՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ, ծածկագիր՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/14» ծածկագրով բաց մրցույթ) քննության նպատակով հրավիրված նիստը տեղի կունենա 07.01.2022թ. ժամը 11:10-ին, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հացեում, 1-ին հարկի դահլիճում»:

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի համաձայն՝

(...)

14. Բողոքի քննությունն իրականացվում է նիստերի միջոցով:

(...)

15. Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը:

(...)

16. Յուրաքանչյուր նիստի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ անձը տեղեկագրում հրապարակում է նիստի օրակարգի, անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվություն պարունակող հայտարարություն: Բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար:

Վերոգրյալ իրավական նորմերի և ներկայացված փաստական հանգամանքների համակարգային և բովանդակային վերլուծության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի վերաբերյալ բողոքարկման ընթացակարգում ներգրվված կողմերը պատշաճ ծանուցվել են,

հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հրավիրված նիստի վերաբերյալ տեղեկագրում առնվազն երկու աշխատանքային օր առաջ հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն պարունակող հայտարարություն և միջնորդությամբ ներկայացված այն պնդումը, որ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն բողոքի քննության նիստի վայրի և ժամի մասին որևէ կերպ չի ծանուցվել, որի արդյունքում էլ խախտվել է Ընկերության՝ իր կողմից ներկայացված բողոքի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքը, անհիմն է և զուրկ որևէ իրավական հիմքից:

Ընդ որում՝ հարկ եմ համարում ընդգծել, որ բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար:

Ինչ վերաբերում է բողոքի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքի խախտման համար ներկայացված մեկ այլ հիմքին՝ բողոքի վերաբերյալ պատվիրատուի դիրքորոշումը և կից փաստաթղթերի պատճենները չտրամադրելուն, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքի վերաբերյալ պատվիրատուի դիրքորոշումը 07.01.2022թ. հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցչի կողմից մանրամասն ներկայացվել է, իսկ նիստն առցանց հեռարձակվել է նաև համացանցում, որին հետևելու համացանցային հղումը նշվել է տեղեկագրում հրապարակված հայտարարության մեջ:

Ընդ որում, պահանջ ներկայացվելուն պես՝ նույն օրը, «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին ուղարկվել է նաև նիստի ընթացքում Պատվիրատուի բանավոր հայտնած դիրքորոշման միևնույն բովանդակությամբ թղթային տարբերակը և ի պատասխան նշված դիրքորոշման՝ Ընկերության կողմից 12.01.2022թ. ներկայացվել է առարկություն, որն ուղարկվել է Պատվիրատուին:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ միջնորդությունը ենթակա է մերժման»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**